Դանիել Վարուժան

Հարկիք

Եզներս են խարտյաշ, լույս ճակատներով,
Ջոր պաճուճեր եմ նուսխայով կապույտ:
Գարունի առտվան օդեն են գինով. —
Կնային, խաղա՛ղ, դաշտերուն անքույթ:
Ձմեռը զանոնք խարով սնուցի. —
Մեհյանին պարարտ կուռքերն են կարծես:
Իրենց սանտրված պոչը թավարծի
Կլիզե իրենց կողերն՝ օձի պես:
Կսիրեմ անոնց նյուսը բյուրաձալ,
Ռունգերնին տամուկ, բիբերնին խոշոր՝
Ուր կա դաշտերուն երազն անայլայլ,
Ե՛վ ճոճքը իրենց, և՛ պոչյունն հզոր
Հորիզոններե՛ն, երբ կերթան անվերջ
Եղջյուրնին մխած Արշալույսին մեջ: